ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2024Թ. 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԿԻՐԱԲԵՐԵԼ

zinapah.am

Բովանդակություն

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումը և ֆինանսական վերլուծությունը

Կառավարման մարմինը և գործադիր թիմը
Ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները
Գլխավոր գործադիր տնօրենի խոսքը
Գործառնությունները 2017 – 2024թթ. ՍԳ
Շահառուները և վճարված հատուցումները 2024թ. 2-րդ եռամսյակ
Նվիրատվությունները 2017 – 2024թթ. 2-րդ եռամսյակ
Շահառուներին միտված սոցիալական ծրագրեր և համագործակցություն
Զարգացման ուղին դեպի անկախություն

2023թ. աուդիտորական հաշվետվություն

Կառավարման մարմինը և գործադիր թիմը

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Ադամ Կաբլանյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Տաթևիկ Յաղջյան
ԳԳՏ տեղակալ
Գործառնությունների գծով տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Նարինե Գալստյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Իզաբելլա Մանասարյան
Դոնորների հետ հարաբերությունների և ֆոնդհայթայթման մենեջեր

Հրաչիկ Ավթանդիլյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Ադմինիստրատիվ օգնական

Նարե Ատոմյան
Ադմինիստրատիվ օգնական

ՁԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ՁԻՆԱՊԱՀԸ ստեղծվել է 2017թ.՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության:

2023թ. ապրիլին հիմնադրամը, որը հայտնի էր **որպես Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ, վերանվանվեց ՁԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի:** Հիմնադրամը ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն ՀՀ Օրենքի:

ՁԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: ՁԻՆԱՊԱՀԸ համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ՁԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- Հայաստանի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամտից)
- Նվիրատվություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից, այդ թվում՝ Հայաստանից
- ՁԻՆԱՊԱՀԻ ակտիվների կառավարումից ստացված եկամտից

ՁԻՆԱՊԱՀԻ կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է բարձր հեղինակություն վայելող փորձառու մասնագետներից՝ ֆինանսների և բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում:

ՁԻՆԱՊԱՀԻ գործառնական կառավարումը իրականացվում է բարձր մոտիվացիայով և փորձառու գործառնական թիմի կողմից:

ՁԻՆԱՊԱՀԻ կայքը արտացոլում է բոլոր ֆինանսական հոսքերը՝ նվիրատվությունները և պարտադիր վճարները, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ՁԻՆԱՊԱՀԻ կայքում հրապարակվում են նաև գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված Տարեկան աուդիտի հաշվետվությունները:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ՆԱԽԱԲԱՆ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

ԶԻՆԱՊԱՀ համայնքի հարգելի բարեկամներ,

Ուրախ եմ կիսվել ձեզ հետ ԶԻՆԱՊԱՀԻ 2024թ. 2-րդ եռամսյակի զեկույցով: Ուզում եմ առանձնահատուկ կերպով ընդգծել, որ թե՛ ԶԻՆԱՊԱՀԻ հոգաբարձուների խորհուրդը, թե՛ գործադիր թիմը մեծ ջանքեր են դնում նոր նախաձեռնություններ իրականացնելու և ԶԻՆԱՊԱՀԸ մեր զինծառայողների և նրանց ընտանիքների նվիրմանն ու զոհողությանը արժանի կառույց դաձնելու ուղղությամբ:

2017թ. մինչև 2024թ. 2-րդ եռամսյակի ավարտը ԶԻՆԱՊԱՀԸ ֆինանսական հատուցումներ է տրամադրել **5,434** զինծառայողների ընդհանուր առմամբ **96.9 մլրդ** ՀՀ դրամի չափով:

ԶԻՆԱՊԱՀԻ միջոցների շուրջ **159 մլրդ** ՀՀ դրամը ձևավորվել է պարտադիր դրոշմանիշային վճարներից, **20 մլրդ՝** ակտիվների կառավարումից և **9.5 մլրդ՝** նվիրատվություններից:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, մենք շարունակում ենք իրականացնել ԶԻՆԱՊԱՀԻ Հոգաբարձուների խորհրդի 2024թ. հունվարի նիստի որոշումը, այն է՝ 26%-ով բարձրացնել շահառուներին վճարվող ամսական հատուցման և լրացուցիչ վճարները: Այս փոփոխությունը պայմանավորված էր 2017թ. ի վեր արձանագրված գնաճով և արտահայտում է մեր անսասան նվիրումը մեր զինծառայողներին: Այս նախաձեռնության արդյունքում ԶԻՆԱՊԱՀԻ տարեկան պարտավորությունները կաճեն 4 մլրդ ՀՀ դրամով:

Մենք հստակ քայլեր ենք ձեռնարկում՝ ընդլայնելու մեր առաքելության հիմնական ֆինանսական հենքը՝ կարևորելով սոցիալական ինտեգրման ծրագրերը, ինչպես նաև ԶԻՆԱՊԱՀԻ առաքելության արդյունավետ հաղորդակցությունը: Մենք շարունակելու ենք բարձրաձայնել զինծառայողներին հուզող հարցերը և պաշտպանել նրանց ըստ արժանվույն, քանի որ մենք քաջ գիտակցում ենք նրանց զոհաբերությունների գինը: Մեր պատիվն է ծառայել նրանց և ապահովել անհրաժեշտ միջոցներով:

Առաջիկա ամիսներին մեր թիմը կհամալրվի նոր անդամով, ում գործառույթը կլինի կենտրոնանալ սոցիալական ծրագրերի և նվիրատուների հետ հարաբերությունների վրա, համագործակցային հարաբերություններ կառուցել և ամրապնդել կապն այն գործընկերների հետ, ովքեր կօժանդակեն ԶԻՆԱՊԱՀԻՆ լավագույնս աջակցելու մեր զինծառայողներին և նրանց ընտանիքներին:

ԶԻՆԱՊԱՀԸ համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության հետ օրենսդրական փոփոխությունների շուրջ, որի արդյունքում հատուցման գումարները կմնան անփոփոխ՝ անկախ հաշմանդամության խմբի վերանայումից: Այս փոփոխությունը ֆինանսական և բարոյական տեսանկյունից մեծ աջակցություն կլինի մեր զինծառայողների համար: Ակնկալվում է, որ օրենքը կընդունվի 2024թ. հուլիսին:

Թափանցիկության, հաշվետվողականության և բարեվարքության մեր արժեքներն անփոփոխ են: Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացու, ինչպես նաև մեր յուրաքանչյուր նվիրատուի, ովքեր վստահում են մեզ մեր առաքելության իրականացման հարցում որպես առաջատար ազգային հիմնադրամ:

Եկեք համատեղենք մեր ջանքերը ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին և նրանց ընտանիքներին ոգեշնչելու նպատակի շուրջ...

Միասին զինվորիս կողքին...

Հարգանքով՝

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2017-2024թթ. Սահող Գնահատականով (ՍԳ)

2024թ. 2-րդ եռամսյակի դրությամբ, ինչպես նաև 2024թ. տարեվերջի սահող գնահատականներով (ՍԳ) կանխատեսվում է, որ ԶԻՆԱՊԱՀԸ կգրանցի եկամտի աճ մոտ 6%-ով նախորդ տարվա համեմատ, որը կկազմի 52,719 մլն ՀՀ դրամ: Եկամտի աճը պայմանավորված է պարտադիր դրոշմանիշային վճարների 1% աճով, ակտիվների կառավարման եկամտի աճով՝ 43% և նվիրատվությունների ավելի թեթև աճով՝ 11%:

Գնահատվում է, որ 2024թ. ԶԻՆԱՊԱՀԻ եկամտի պարտադիր վճարներին վերագրվող մասը կկազմի 83%, ի տարբերություն 2023թ. 87%-ի: Ակտիվների կառավարումից ձևավորվող եկամուտը կաճի 4 տոկոսային կետով՝ դառնալով 16%՝ ի համեմատություն 2023թ. 12%-ի: Իսկ նվիրատվությունից գոյացող եկամուտը կկազմի 1% և կմնա կայուն նախորդ տարվա համեմատությամբ:

Կանխատեսվում է, որ ընդհանուր ծախսերը կաճեն 40%-ով և կկազմեն 21,116 մլն ՀՀ դրամ: Գնահատվում է, որ հատուցումները կաճեն 41%-ով՝ պայմանավորված շահառուների ամսական հատուցման և լրացուցիչ գումարների 26% ինդեքսավորմամբ, 2023թ. արցախյան նոր հատուցման դեպքերով: Արցախյան շուրջ 190 դեպքերի միանվագ հատուցման գումարները տրամադրվել են 2024թ.-ին, այնուհետև կշարունակվեն տրամադրվել ամսական վճարները 20 տարի շարունակ:

2024թ. կանխատեսվում է բյուջետավորված 57% աճի փոխարեն ծախսերի աճ 40%-ով նախորդ տարվա համեմատությամբ: ԶԻՆԱՊԱՀԻ՝ հատուցումներին վերագրվող ծախսերը կանխատեսվում են, որ կմնան կայուն 98% 2023թ. համեմատությամբ:

Չնայած ծախսերի աճին՝ վարչական ծախսերի հարաբերակցությունը 2023թ. վերջի ընդհանուր ակտիվներին կազմում է 0.40% սահող գնահատականով, ինչը չի գերազանցում օրենքով սահմանված առավելագույն 2%-ի շեմը:

ՄԼՆ ԴՐԱՄ	2017-2019	2020	2021	2022	2023	2024 ՍԳ	2017-2024 ՍԳ	2024թ. 2023-ի համեմատ	% հարաբ 2023	% հարաբ 2024
Եկամուտ պարտադիր վճարներից	21,779	9,134	29,072	35,274	43,199	43,731	182,191	1%	87%	83%
Նվիրատվություններ	305	6,976	1,290	508	273	305	9,656	11%	1%	1%
Կամուրջ*	-	1,000	1,510	239	237	165	3,151	-30%	0.5%	0.3%
ՀՀԿԲ**	-	-	301	-	-	-	301		0.0%	0.0%
Ակտիվների կառավարում	2,545	2,425	1,841	3,256	5,944	8,518	24,530	43%	12%	16%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	0.24	0.19	0.26	0.17	0.9	-37.7%	0.0%	0.0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**24,629**	**19,535**	**34,015**	**39,278**	**49,654**	**52,719**	**219,830**	**6%**	**100%**	**100%**
Հատուցումներ	1,635	8,030	44,484	16,878	14,747	20,741	106,513	41%	98%	39%
Վարչական ծախսեր	-	-	-	246	267	323	836	21%	2%	2%
Կապիտալ ծախսեր	-		105	3	45	12	165	-74%	0.3%	0.05%
Գործառնական ծախսեր	0.32	-	149	21	25	41	237	60%	0.2%	0.1%
Այլ	-	-	-	-	-	-	-		0.0%	0.0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1,635**	**8,030**	**44,738**	**17,148**	**15,084**	**21,116**	**107,752**	**40%**	**100%**	**40%**

* Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 42 ամսվա ընթացքում՝ ամսական 300,000 ՀՀ դրամի չափով:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2017-2024թթ. 2-րդ ԵՌ

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2024թթ. 2-րդ եռամսյակի և տարեվերջյան սահող գնահատականով եկամուտը և ծախսերը արտացոլված են գրաֆիկում՝ ըստ տարիների:

2024թ. նախորդ տարվա համեմատությամբ ակնկալվում է ընդհանուր եկամտի 6% աճ՝ կազմելով 52,719 մլն ՀՀ դրամ: Ընդհանուր ծախսերը 2023թ. համեմատությամբ նույնպես կաճեն 40%-ով՝պայմանավորված պարտավորությունների աճով՝ կազմելով 21,116 մլն ՀՀ դրամ:



ԶԻՆԱՊԱՀԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2024ԹԹ. 2-ՐԴ ԵՌ

2024թ. 2-րդ եռամսյակում ԶԻՆԱՊԱՀԻ եկամուտը կայուն է նախորդ տարվա համեմատությամբ, շուրջ 11,193 մլն ՀՀ դրամ: Ակտիվների կառավարումից ստացված եկամուտը աճել է 58%-ով, մինչդեռ նվիրատվությունները նվազել են -45%-ով: Ընդհանուր ծախսերը աճել են 43%-ով և կազմում են 5,463 մլն ՀՀ դրամ, իսկ հատուցումները աճել են 43%-ով: 2023թ. համեմատ՝ պայմանավորված շահառուներին տրամադրվող հատուցման ամսական գումարների և լրացուցիչ վճարների 26% ինդեքսավորմամբ, ինչպես նաև Արցախի 2023թ. սեպտեմբերի 19-20-ի նոր դեպքերով հատուցումներով:

2024թ. 2-րդ եռամսյակում ԶԻՆԱՊԱՀԻ եկամտի մասնաբաժինը, որը վերագրվում է պարտադիր վճարներին, կազմել է 80%, ինչը անկում է արձանագրել 7 տոկոսային կետով 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Ակտիվների կառավարումից ստացված եկամուտը 19% աճ է գրանցել և բարձրացել 7 տոկոսային կետով:

ԶԻՆԱՊԱՀԻ ընդհանուր ծախսերի հատուցումներին վերագրվող մասնաբաժինը կազմում է կայուն 98%:

ՄԼՆ ԴՐԱՄ	ԵՌ1 2024	ԵՌ2 2024	ԵՌ1-4 2023	ԵՌ1-4 2024	2024-ը 2023-ի համեմատ	ԵՌ2 '24 ԵՌ2 '23 համեմատ	% հարաբ ԵՌ2 2023	% հարաբ ԵՌ2 2024
(ԴՐԱՄ)								
Եկամուտ պարտադիր վճարներից	11,272	8,969	43,199	43,731	1%	-7%	87%	80%
Նվիրատվություններ	88	27	273	305	11%	-45%	0.4%	0.2%
Կամուրջ*	15	15	237	165	-30.4%	-78%	1%	0.13%
ՀՀԿԲ**	-	-	-	-	-	-	-	0%
Ակտիվների կառավարում	2,019	2,182	5,944	8,518	43%	58%	12%	19%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	0.17	-	-	-38%		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**13,394**	**11,193**	**49,654**	**52,719**	**6%**	**1%**	**100%**	**100%**
Հատուցումներ	5,788	5,359	14,747	20,741	41%	43%	98%	98%
Վարչ. ծախսեր	60	83	267	323	21%	34%	2%	2%
Կապ. ծախսեր	1	5	45	12	-74%	192%	0%	0.1%
Գործառնական ծախսեր	7	16	25	41	60%	88%	0.2%	0.3%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**5,856**	**5,463**	**15,084**	**21,116**	**40%**	**43%**	**100%**	**100%**

* Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհետ կորած զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 42 ամսվա ընթացքում՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

2024թ. ՍԳ համեմատությունը
2017-2024թթ. հետ. ամփոփ պատկերը

- Պարտադիր վճարների 24%-ը կստացվի 2024թ.
- Ակնկալվում է, որ նվիրատվությունների 3%-ը կստացվի 2024թ.
- Ակտիվների կառավարման եկամտի 35%-ը կձևավորվի 2024թ.
- Հատուցումների 19%-ը կվճարվի 2024թ.

ՄԼՆ ԴՐԱՄ	2023	2024	2017-2024	% հարաբ 2024
Պարտադիր վճարներ	43,199	43,731	182,191	24%
Նվիրատվություններ	273	305	9,656	3%
Ակտիվների կառավարում	5,944	8,518	24,530	35%
Հատուցումներ	14,747	20,741	106,513	19%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2024թ. 2-րդ ԵՌ

2017-2024թթ. 2-րդ ԵՌ. ԶԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել **5,434** շահառուների:

2024թ. 2-րդ եռամսյակում հատուցվել են **89 նոր դեպքեր՝ 2023թ. նույն ժամանակահատվածի 22 դեպքերի համեմատ:**

2024թ. 2-րդ եռամսյակի 89 նոր դեպքերի բաշխվածությունը ստորև՝ ըստ շահառուների դասակարգման:

ԶՈՀՎԱԾ **76**

ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ **4**

1-ին խումբ **2**

2-րդ խումբ **7**

2017 - 2024ԹԹ. 2-ՐԴ ԵՌ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ՝ 5,434 ԴԵՊՔԵՐՈՎ



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2017-2024թթ. 2-րդ ԵՌ

2017-2024թթ. 2-րդ եռամսյակի կտրվածքով **5,434 դեպքերով հատուցումները** գրաֆիկում բաշխված են ըստ շահառուների դասակարգման: **43%**-ը ժամկետային շարքայիններ են, մինչդեռ **30%**-ը զորահավաքային շարքայիններ, սպաներ, **19%**-ը պայմանագրային շարքայիններ և **8%**-ը կամավորներ:

2017-2024ԹԹ. 2-ՐԴ ԵՌ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ, 5,434 ԴԵՊՔՈՎ





2017-2024ԹԹ. 2-ՐԴ ԵՌ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

89

Նոր հատուցման դեպքեր 2024թ. 2-րդ եռամսյակում և 5,434 դեպքեր 2017-2024թթ. 2-րդ ԵՌ

5.4 մլրդ ՀՀ դրամի

հատուցումներ 2024թ. 2-րդ ԵՌ

96.9 մլրդ ՀՀ դրամի

հատուցում 2017-2024թթ. 2-րդ ԵՌ դրությամբ՝ զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին

1%

պարտադիր վճարների աճ 2024թ. 2-րդ ԵՌ 2023թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017-2024թթ. 2-րդ ԵՌ դրությամբ

2017-2024թթ. 2-րդ ԵՌ դրությամբ ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները կազմում են շուրջ 9.5 մլրդ ՀՀ դրամ: Նվիրատվությունների ընդհանուր թիվը կազմում է 92,552՝ միջին նվիրատվության գումարը՝ 102,000 ՀՀ դրամ: Ամենաշատ նվիրատվությունները կատարվել են պատերազմական էսկալացիաների ժամանակ:

2024թ. 1-2 եռամսյակների նվիրատվությունների գումարը համեմատած 2023թ. նույն ժամանակահատվածի հետ նվազել են -12%-ով: Նվիրատվությունների քանակը նվազել է -16%-ով, իսկ նվիրատվությունների միջին չափը աճել է 5%-ով: Նվիրատվությունների աճը պայմանավորված է ԱՄՆ դոլարով արվող նվիրատվություններով: Այլ արժույթներով կատարվող նվիրատվությունները գրանցել են 30% անկում: Դա բացատրվում է հետպատերազմյան իրավիճակով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրատվությունները սովորաբար կտրուկ աճ են ունենում, ինչն արտահայտվել է 2020թ. արդյունքներում: Նվիրատվությունների ամենամեծ անկումը գրանցվել է ռուբլիով արված նվիրատվություններում՝ պայմանավորված Ռուսաստանի դեմ իրականացվող սանկցիաներով և միջազգային փոխանցումների սահմանափակումներով: Նվիրատվությունները կատարվել են բանկային փոխանցումներով, ինչպես նաև www.zinapah.am կայքի միջոցով:

2017-2024թթ. 1-2 ԵՌ նվիրատվությունները ըստ արժույթի

Currency' 000	2017-2019	2020	2021	2022	2023	2024 1-2 ԵՌ	2017-2024 ԵՌ2	ԵՌ2 2024-Ը ԵՌ2 2023-Ի ՀԱՄԵՄԱՏ
ՀՀ դրամ	296,495	4,380,043	765,793	301,333	173,750	46,484	5,937,198	-30%
Դոլար	7	4.826	879	492	233	164	6,601	11%
Ռուբլի	162	114,908	6,517	455	1	2	122,045	123%
Եվրո	1	797	122	34	20	8	983	-31%
2017-2024թթ. 1-2 ԵՌ նվիրատվությունները ՀՀ դրամով								
	304,611	6,975,856	1,290,065	508,062	273,307	114,584	9,466,485	-12%
Նվիրատվությունների քանակ	2,807	41,769	25,976	12,665	5,209	2,397	92,552	-16%
Նվիրատվությունների միջին չափը	390	167	50	40	52	48	102	5%

2017-2024թթ. ՍԳ նվիրատվությունները



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն 2024թ. 2-րդ ԵՌ

ԶԻՆԱՊԱՀԸ համագործակցում է տարբեր հիմնադրամների, ոչ պետական բարեգործական կազմակերպությունների հետ՝ աջակցելով մեր զինծառայողներին նրանց ընտանիքներին, նրանց ֆիզիկական, հոգեբանական կրթական բարեկեցության ապահովման նպատակով: Հաշվի առնելով շահառուների հետ կապի պահպանման կարևորությունը՝ ԶԻՆԱՊԱՀԻ թիմը քայլեր է նախաձեռնել իր շահառուների հետագա զարգացման սոցիալական ինտեգրման ծրագրերի մեկնարկի ուղղությամբ: ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է ընդլայնել համագործակցող ընկերությունների ցանկը նոր համագործակցության հուշագրեր է ստորագրում: Մեր նպատակն է համախմբել, միավորել համակարգել պետական, մասնավոր հատվածը, ՀԿ-ներին բարեգործական կազմակերպություններին զինծառայողներին նրանց ընտանիքներին աջակցելու գաղափարի շուրջ:

ԶԻՆԱՊԱՀԻ նախաձեռնություն. Երևան Պարկ

Հունիս 4-ին Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ ԶԻՆԱՊԱՀԻ կողմից պայմանավորվածություն էր ձեռք բերվել **YerevanPark-ի** տնօրինության հետ հերթական անգամ հյուրընկալելու արդեն 200 զոհված և անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների երեխաների, ովքեր հնարավորություն ստացան անմոռանալի օր անցկացնել Yerevan Park-ում: Երեխաները կարողացան 1 ամբողջական օր անվճար և անսահմանափակ քանակով օգտվել Yerevan Park-ում գործող բոլոր զվարճանքի ատրակցիոններից և տեղում վայելել ԶԻՆԱՊԱՀԻ կողմից կազմակերպած հյուրասիրությունը:

Միջոցառումն իրականացվեց **Հայորդի** թիմի հետ համատեղ ջանքերով: Միջոցառման անմոռանալի զգացողությունները ոգևորում են ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին և նպաստում, որ բացի ֆինանսական հատուցումից նրանք անտեսված չզգան՝ ստանալով հասարակության բարոյական աջակցությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն 2024թ. 2-րդ ԵՌ

ԶԻՆԱՊԱՀԻ նախաձեռնություն. հանդիպում շահառուների հետ

2024թ. հունիսի 6-ին կայացավ ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների հետ 2-րդ հանդիպումը: Այս անգամ հրավիրված էին ոչ միայն 2023թ. Արցախից բռնի տեղահանված շահառուներ, այլ նաև 2020թ. 44 օրյա պատերազմում զոհված, անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամները:

Հանդիպման ընթացքում շահառուներին ներկայացվեց ԶԻՆԱՊԱՀԻ առաքելությունը, հիմնադրման պատմությունը, նորությունները:

Կարևորելով շահառուների տեղեկացվածության բարձրացումը՝ շահառուներին ներկայացվեցին նաև շահառու ճանաչվելու գործընթացը, ֆինանսական գրագիտության կարևոր կետեր:

Շահառուներին ներկայացվեց նաև ԶԻՆՀԱԲ հարթակը, ինչպես նաև սոցիալական ծրագրերը, որոնք իրականացվել են հիմնադրամի գործունեության ընթացքում: Հանդիպումն ամփոփվեց հարց ու պատասխանով, շահառուները ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները: Ելնելով անհրաժեշտությունից և շահառուների արձագանքներից՝ հանդիպումները կլինեն շարունակական:

ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի նախաձեռնություն

Թումո կենտրոնն այս տարի նախաձեռնել է իր ամենամյա ամառային ճամբարին անվճար մասնակից դարձնել նաև ԶԻՆԱՊԱՀԻ 12-ից 16 տարեկան երեխա շահառուներին:

Ճամբարի մասնակցությունը հնարավորություն կտա երեխաներին ոչ միայն ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ, որոնք կօգնեն բացահայտել երեխաների ներուժը, այլ պարզապես անցկացնել անմոռանալի օրեր և ձեռք բերել նոր ընկերներ Հայաստանի և աշխարհի տարբեր անկյուններից: Երևանում և Դիլիջանում անցկացվող ճամբարների ընթացքում Թումո կենտրոնի փորձառու դասընթացավարների միջոցով երեխաները հնարավորություն կունենան ուսումնասիրել նշված 8 թեմաները՝ ծրագրավորում, խաղերի ստեղծում, անիմացիա, երաժշտություն, լուսանկարչություն, 3D մոդելավորում, գրաֆիկ դիզայն և ռոբոտաշինություն: Տեղեկատվության տարածման և գրանցման համար օնլայն հաղորդագրություն ուղարկվեց նշված տարիքային խմբի 600-ից ավել շահառուների, ովքեր օնլայն հնարավորություն ստացան գրանցվել: Արդյունքում մասնակցության համար նշված տարիքային խմբի 15 երեխա գրանցվել են և մասնակցության հնարավորություն են ստացել:

ZINHUB առցանց հարթակ

2024թ. փետրվար ամսից սկսած ZINHUB առցանց հարթակում ունենք 29 գրանցված և համագործակցող գործընկեր կազմակերպություններ, որոնք իրականացնում են տարբեր անվճար ծրագրեր մեր շահառուների լայն շրջանակների համար: Հարթակում փուլային տեղադրվում են տարբեր դասընթացներ, աշխատանքի հայտարարություններ, հոգեբանական/բժշկական և այլ ծառայություններ՝ դեղորայքի տրամադրման, պրոթեզավորման, ատամնաբուժական ծառայությունների, ինչպես նաև տարբեր խմբակների, ճամբարների մասին հայտարարություններ:

Ընթացիկ անդադար իրականացվում են աշխատանքներ ավելի շատ կազմակերպություններ ներգրավվելու և ավելի շատ հայտարարություններ տեղադրելու, շահառուներին իրազեկելու ուղղությամբ, ինչի արդյունքում շահառուները կարողանում են մուտք գործել հարթակ, տեղեկանալ և անմիջապես գրանցվել տարբեր դասընթացների, խմբակների, օգտվել այլ ծառայություններից:

SOVORIR IT
«Սովորիր.Այթի» կրթական ՀԿ

2024թ. մայիսի 30-ին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել «Սովորիր.Այթի» ՍՊԸ Կրթական հասարակական կազմակերպության հետ:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԻՆԱՊԱՀԸ կառավարվում էր Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կամավորական սկզբունքով 2021թ. սկսած ԶԻՆԱՊԱՀԸ տարանջատվում է ԿԲ-ից՝ դառնալու անկախ իրավաբանական անձ իր սեփական ենթակառուցվածքով:

ԹԻՄ

- Ղեկավար մարմինն է՝ Հոգաբարձուների խորհուրդը 5 անդամներով
- Գործառնական թիմ՝ 14 հոգուց բաղկացած անձնակազմ
- Կառուցվածքային փոփոխություն՝ կենտրոնանալով ԶԻՆԱՊԱՀԻ՝ որպես ֆինանսական կառույցի հիմնական իրավասությունների և սոցիալական ծրագրերի վրա
- Անձնակազմի կատարողականի և գնահատման թվային Teamflect համակարգի իրագործում

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Գնումների կանոնակարգի ընդունում
- ԶԻՆԱՊԱՀԻ վերաբրենդավորման արշավների մեկնարկ
- ԶԻՆՀԱԲ հարթակի ներդրում
- 2023թ. աուդիտի ավարտ և հրապարակում

ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ՄՌ կառավարում
- Հաշվապահական ծառայությունների նոր գործընկերոջ ընտրություն 2024թ.
- Հաճախորդների զանգերի կենտրոն
- SS անվտանգություն
- Իրավախորհրդատու

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ կայքի և ենթակառուցվածքների մշակում
- Դրոշմանիշային վճարների վերադարձի պարտադիր գործընթաց և իրագործում
- Ֆինանսական ենթակառուցվածքների մշակում հատուցումների ծրագրի հենքով
- SS անվտանգության քաղաքականության մշակում

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԶԻՆԱՊԱՀԻ օրենքի փոփոխություն՝ աջակցելու հաշմանդամության կարգավիճակի փոփոխությանը
- Սոցիալական ծրագրերի իրականացման կանոնակարգի մշակում
- Շահառուների՝ հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցման ծրագիր
- 2008-2017թթ. ԶԻՆԱՊԱՀԻ հատուցումների միավորում ԶԻՆԱՊԱՀԻ համակարգում

ԶԻՆԱՊԱՀԻ 2023թ. աուդիտն իրականացրել է **Գրանթ Թորնթոն ՓԲԸ**-ն, իսկ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն, որոնք հրապարակվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի («ՄՀՍԽ») կողմից: Դրանք պատրաստվել են այն ենթադրությամբ, որ Հիմնադրամը գործում է շարունակական հիմունքներով: Ամբողջական զեկույցը կարող եք գտնել ստորև ինչպես նաև ԶԻՆԱՊԱՀԻ կայքում:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամով	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ-ընթացիկ ակտիվներ			
Գույք և սարքավորում		94,691	126,849
Ոչ նյութական ակտիվներ		14,885	12,742
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	2,573,923	620,521
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	27,378,861	8,681,686
		30,062,360	9,441,798
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր		28,617	7,459
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	42,579	1,215,099
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	44,710,738	32,674,544
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	5,519,741	2,389,638
		50,301,675	36,486,740
Ընդհանուր ակտիվներ		80,364,035	45,928,538
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	103,724,845	107,762,538
Վարձակալական պարտավորություններ		19,861	32,130
		103,744,706	107,794,668
Ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	13,101,671	13,314,038
Վարձակալական պարտավորություններ		23,561	27,415
Կրեդիտորական պարտքեր		14,948	14,536
		13,140,180	13,355,989
Զուտ ակտիվներ			
Այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով		(27,357)	(57,586)
չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստը	8	(36,493,494)	(75,164,533)
(Կուտակված վնաս)/չբաշխված շահույթ		(36,620,851)	(75,222,119)
Ընդհանուր պարտավորություններ և զուտ ակտիվներ		80,364,035	45,928,538

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամով	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ			
Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	9	43,709,476	36,021,512
Ֆինանսական եկամուտ	10	5,952,073	3,256,038
Այլ եկամուտ		697	188
		49,662,073	39,277,738
Ծախսեր			
Հատուցման ծախսեր		(3,436,956)	(12,983,465)
Աշխատակիցների նպաստներ		(132,110)	(118,480)
Մաշվածություն և ամորտիզացիա		(34,600)	(33,625)
Շահույթ/(վնաս) ակնկալվող վարկային կորուստների գծով			
պահուստի վերաչափումից	11	(228,394)	84,462
Ֆինանսական ծախսեր	12	(7,064,627)	(9,888,750)
Այլ ծախսեր		(94,772)	(83,551)
Զուտ վնաս փոխանակման տարբերություններից		252	(1,827)
		(10,991,207)	(23,025,237)
Տարվա արդյունք		38,671,039	16,252,502
Այլ համապարփակ եկամուտ			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից զուտ վնաս		32,521	(20,961)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		(2,292)	(6,646)
Տարվա այլ համապարփակ վնաս		30,229	(27,607)
Ընդամենը տարվա համապարփակ վնաս		38,701,268	16,224,895

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամով	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	**29,979**	**91,417,035**	**91,447,014**
Տարվա արդյունք	-	(16,252,502)	(16,252,502)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական վնաս	(27,607)	-	(27,607)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(27,607)	(16,252,502)	(16,224,895)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(57,586)**	**(75,164,533)**	**(75,222,119)**
Տարվա արդյունք	-	38,671,039	38,671,039
Տարվա այլ համապարփակ ֆինանսական վնաս	30,229	-	30,229
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	30,229	38,671,039	38,701,268
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(27,357)**	**(36,493,494)**	**(36,620,851)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամով	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված պարտադիր վճարներ և նվիրաբերություններ	43,709,476	36,021,512
Տրամադրված հատուցումներ	(14,746,687)	(16,877,925)
Աշխատանքային ծախսեր	(99,729)	(82,302)
Այլ եկամուտ	340,809	56
Այլ ծախսեր	(513,676)	(147,024)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	28,690,193	18,914,317
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	-	
Հիմնական միջոցների ձեռքբերում	(59.908.431)	(2,530)
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(1,997,423)	(25,975,000)
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	30,000,000	-
Բանկերում տեղաբաշխված միջոցների մարում	1,267,377	4,370,000
Մուտքեր պետական պարտքային արժեթղթերում կատարված ներդրումների մարումից	4,944,405	1, 400,000
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	134,123	991,721
Պետական պարտքային արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ	(25,559,949)	222,500
Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագ.) զուտ դրամական միջոցներ		(18,993,309)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	3,130,244	(78,992)
Արտարժույթի ազդեցությունը կանխիկի վրա	(141)	(1,668)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	2,389,638	2,470,295
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	5,519,741	2,389,638

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին, կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները և անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:
ԶԻՆԱՊԱՀ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին ԶԻՆԱՊԱՀԻ մասին։
Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական հարթակներում։

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրատվությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի։

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին։

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ